EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 28323/15

Գայանե ԽԼՂԱԹՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

(տե՛ս կից աղյուսակը)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2020 թվականի հունիսի 11-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ *դատավորներ*,

եւ Լիվ Տիգերշտետ [Liv Tigerstedt]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար,*

հաշվի առնելով 2015 թվականի հունիսի 1-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԽԼՂԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուի տվյալները ներկայացված են կից աղյուսակում:

Դիմումատուին ներկայացրել է Երեւանում բնակվող նրա հայրը՝ պրն Հ. Խլղաթյանը:

Դիմումատուի՝ քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողության առնչությամբ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բողոքն ուղարկվել է Հայաստանի կառավարություն (Կառավարություն): Կոնվենցիայի այլ դրույթների համաձայն ներկայացված՝ նույն փաստերի վրա հիմնված բողոքները նույնպես ուղարկվել են:

Դատարանն ստացել է գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ հայտարարությունը, համաձայն որի՝ դիմումատուն համաձայնել է հրաժարվել Հայաստանի դեմ հետագա պահանջներից այն փաստերի առնչությամբ, որոնք հիմք են սույն գանգատի համար՝ կից աղյուսակում մանրամասնորեն ներկայացված գումարները Կառավարության կողմից իրեն վճարելու պարտավորությունը կատարելու պայմանով: Այդ գումարները ենթակա են վճարման Դատարանի կողմից կայացված որոշման մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Այդ գումարները նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետը լրանալու օրվանից մինչեւ վճարման օրն այդ գումարների համար վճարել պարզ տոկոսներ՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում:

ԽԼՂԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դատարանը հաշվի է առնում կողմերի միջեւ գործը բարեկամական ճանապարհով կարգավորելու վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը: Դատարանը բավարարված է համարում այն պայմանը, որ համաձայնությունը հիմնված է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, եւ որեւէ պատճառ չի տեսնում գանգատի հետագա քննությունն արդարացնելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պատշաճ է համարվում գործը քննվող գործերի ցուցակից հանելը:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

*Որոշում է* գանգատը հանել իր կողմից քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 39-րդ հոդվածին համապատասխան:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի հուլիսի 2-ին:

| | |
|---|---|
| Լիվ Տիգերշտեդտ | Քրշիշթոֆ Վոյտիչեկ |
| Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար | Նախագահ |

ԽԼՂԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատ

(քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողություն)

| Գանգատ թիվ<br>Ներկայացման ամսաթիվը | Դիմումատուի անունը<br>Ծննդյան ամսաթիվը | Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը | Ամրապնդված նախադեպային իրավունքի համաձայն ներկայացված այլ բողոքներ | Կառավարության հայտարարությունն ստանալու ամսաթիվը | Դիմումատուի հայտարարությունն ստանալու ամսաթիվը | Յուրաքանչյուր դիմումատուին ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը<br>(եվրոյով)[1] | Յուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը<br>(եվրոյով)[2] |
|---|---|---|---|---|---|---|---|
| 28323/15<br>01 հունիսի 2015թ. | **Գայանե ԽԼՂԱԹՅԱՆ**<br>26 նոյեմբերի 1964թ. | Խլղության Համլետ<br>Երեւան | Հոդված 13. Քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողության համար իրավական պաշտպանության որեւէ արդյունավետ միջոցի բացակայություն ներպետական իրավունքում: | 23 դեկտեմբերի 2019թ. | 06 հունվարի 2020թ. | 1 200 | 250 |

[1] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:
[2] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ: